

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայ ժողովրդի պատմության մեջ իր ծանրակշիռ դերակատարմամբ հույժ կարևորվում է Կ.Պոլիսը որպես հայ մտքի զարգացման օջախներից մեկը: Հայտնի է, որ Պոլսում հայերն ապրել են Բյուզանդական կայսրության ժամանակներից՝ թուրքերի գավթումից (1453թ. մայիսի 29) դեռ դարեր առաջ: Պոլսում բնակություն հաստատած առաջին հայերը եղել են զինվորականներ, վաճառականներ, ճարտարապետներ, ուսումնառության եկած երիտասարդներ⁵²⁰: Անկախ թվաքանակից՝ հայ համայնքը հանդես է եկել իբրև էթնակրոնական որոշակի միավոր՝ իր առաջնորդ եպիսկոպոսի գլխավորությամբ⁵²¹:

Կ.Պոլիսը 15-19դդ. և այնուհետև՝ ընդհուպ մինչև Մեծ եղեռնը, արևմտահայ մշակույթի ամենախոշոր կենտրոնն էր՝ այս հասկացության լավագույն և սպառիչ իմաստով, որովհետև այն իր համազգային ընդգրկումներով ու ներգործությամբ խթանել է ոչ միայն Օսմանյան Թուրքիայի հայկական, այլև բուն Հայաստանի քաղաքների ու գավառների ազգային կրոնական, լուսավորական ու մշակութային կյանքը⁵²²: Այստեղ է լույս տեսել արևմտահայ անդրանիկ թերթը՝ «Լրո գիրը» (1832թ.), որը, սակայն, «մեկ տարուան մեջ տեսաւ ծննդեան հետ մահն ալ»⁵²³:

Պետք է նշենք, որ Օսմանյան կայսրությունն իր հպատակ ոչ մուսուլման ժողովուրդների շրջանում մտավոր կյանքի աշխուժացման հանդեպ միշտ էլ բացասաբար է վերաբերվել և տարատեսակ մեթոդներով բռնացել մամուլի և այդպիսով նաև ազատ խոսքի նկատմամբ: Նման պայմաններում բնական է, որ թուրքական պաշտոնական շրջանակներում մեծ դժվարությամբ պիտի ընդունվեր ոչ մուսուլման ժողովուրդների լեզուներով թերթ հրատարակելու թույլտվության որոշումը, որը «բարեփոխումների» համատեքստում արձակել էր սուլթան Մահմուդ II-ը 1831թ.: Ընդհանրապես մինչև 1870 թ., այսինքն՝ ամբողջ 40 տարվա ընթացքում, թուրքերեն լույս տեսած թերթերի թիվը հասավ շուրջ երկու տասնյակի⁵²⁴, մինչդեռ Պոլսում լույս տեսած հայերեն պարբերականների թիվը 1832-1884 թթ. ութ տասնյակից ավելի էր, ինչպես օրինակ՝ «Ազդարար Բյուզանդիան» (1840-41, ապա մինչև 1843 թ. հայաստառ թուրքերեն), «Հայաստան» (1846-1852), «Բանասեր» (1851-1852), «Նոյյան Աղավնի» (1852-1853) և այլն:

1857թ. Օսմանյան կայսրությունում դրվում է տպագրության, գրքի և մամուլի իրավական վերահսկողության սկիզբը⁵²⁵, որն իր գոյության առաջին իսկ օրերից դրսևորում է ծայրահեղ խստություն: Թերթերն ու ամսագրերն իրավական կանոնարկման առանձին բնագավառ դարձան մամուլի վերաբերյալ օրենքի հրապարակվելուց անմիջապես հետո (1864)⁵²⁶: Այդ օրենքներն ինքնին շրջանակների մեջ էին դնում հրատարակիչների և խմբագիրների գործունեությունը, հատուկ կարգ էին սահմանում տպագրվող նյութերի և թերթերի ուղղության վերաբերյալ և հասկանալի կերպով

⁵²⁰ Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 180:

⁵²¹ Խառատյան Ալ., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007, էջ 49-50:

⁵²² Նույն տեղում, էջ 7:

⁵²³ Գալեմբարյան Գր., Պատմութիւն Հայ Լրագրութեան, Վիեննա, 1893, էջ 35,36:

⁵²⁴ Ղուկասյան Վ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը (1832-1853), Երևան, 1975, էջ 37:

⁵²⁵ Желтяков А., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908), Москва, 1972, с. 65.

⁵²⁶ Խառատյան Ալ., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, 1989, էջ 5:

արգելակում էին առանց այդ էլ խիստ հսկողության տակ գտնվող խոսքի ազատությունը: Եթե մինչ այդ թերթերի հրատարակիչները բավարարվում էին սուլթանի ֆերմանով և նրանից նույնիսկ դրամական օգնություն էին ստանում, ապա այժմ նրանք անմիջապես ենթարկվում էին նորաստեղծ մամուլի վարչությանը, որը ոչ թե առաջվա նման բավարարվում էր՝ իրենց համար ոչ հաճելի ուղղություն բռնած պարբերականին տուգանելով կամ դատի տալով, այլ պարզապես արգելում էր նրա հետագա հրատարակումը: 1867 թ. հիմնված «մամուլի բյուրոն» ամենօրյա հսկողություն էր սահմանում թերթերի և ամսագրերի վրա: Հենց այդ բյուրոն էլ, ըստ էության, վերածվեց գրաքննչական օրգանի, որը գործեց մինչև 1908 թ.: Բյուրոյի սահմանափակումները բազմաթիվ էին, որոնք հատկապես սուր կերպով արտահայտվեցին արդուլիամիդյան բռնապետության շրջանում. օրինակ՝ արգելվում էր գործածել մի շարք բառեր, ինչպես՝ *ազատություն, իրավունք, ուժ, խիզախություն, հավասարություն, հետապնդում, միացում, ցար, պալատ, զենք, արյունահեղություն, բռնակալություն, հերոս* և այլն: Առավել դժվար էր հպատակ ժողովուրդների վիճակը: Հայերին արգելվում էր գրել և արտասանել *Հայաստան, հայրենիք* բառերը, հայկական աշխարհագրական անունները դուրս էին մղվում գործածությունից և փոխարինվում էին թուրքական տեղանուններով, թերթերին արգելվում էր տպագրել նյութեր, եթե դրանց ողջ բովանդակությունը կանխավ հայտնի չէր գրաքննությանը, մերժվում էին թագավորների սպանության, սուլթանի վատառողջության, երաշտի կամ անբերրիության մասին «վտանգավոր», խորհելու առիթ տվող լուրերը: Նման խստություններ բանեցվում էին և՛ գեղարվեստական գրականության, և՛ թատերական ներկայացումների նկատմամբ⁵²⁷, նույնիսկ «Թուրքիայի գյուղերում սարսափում էին, երբ գիրք էին տեսնում»⁵²⁸:

1840-ական թվականներին արևմտահայ հասարակական կյանքում ծավալվում է լուսավորական շարժում: Ժողովրդի առաջադիմության նպատակով հիմնադրվում են բարեգործական ընկերություններ, ինչպես նաև մեծահարուստների հովանավորությանն արժանացած հայ ընդունակ երիտասարդների ամբողջ խմբեր մեկնում են Փարիզ՝ «Արևմուտքի Բարեւոն»: Արևմտահայության ընտրությունը կանգ էր առնում հատկապես Փարիզի վրա նաև այն պատճառով, որ հնդկահայ Սամվել Մուրադյանի կտակած գումարներով 1846 թ.-ին Իտալիայի Պադուա քաղաքից Փարիզ էր տեղափոխվել Մուրադյան վարժարանը: Հայ երիտասարդների թվում էր ապագա նշանավոր հրապարակախոս Մատթեոս Մամուրյանը⁵²⁹, ում գլխին անձամբ դափնեպսակ է դրել Լամարթինը: Հավելենք նաև, որ արևմտահայ նոր զարգացող երիտասարդության կրթության գործում պակաս դեր չի խաղացել նաև Վենետիկը: Դեպի Եվրոպա ծայր առած այս հոսանքը հետագա տարիներին նոր թափ է ստանում, թեպետ այն չէր կարող աննկատ անցնել կառավարության աչալուրջ հսկողությունից և բազմաթիվ աքսորների ու պարբերականների փակման առիթ էր դառնալու⁵³⁰:

Այսպիսով՝ Եվրոպայում ուսում ստացած հայ երիտասարդները, գիտելիքներով զինված, վերադառնում են Պոլիս ու Զմյուռնիա՝ լծվելով ազգը կրթելու աշխատանքին: Այլ բովանդակություն են ստանում մամուլն ու գրականությունը, նոր ձև ու որակ են ձեռք բերում հրապարակախոսությունն ու գրականությունը՝ դառնալով հասարակական ազդեցիկ նշանակություն ունեցող երևույթ:

Թեպետ Օսմանյան կայսրությունում մամուլի նկատմամբ կիրառվում էին տարատեսակ սահմանափակումներ, այնուամենայնիվ, Պոլսում հայ մամուլը

⁵²⁷ Ղուկասյան Վ., նշվ. աշխ., էջ 32-34:

⁵²⁸ Голобородько И., Старая и новая Турция, Москва, 1908, с. 117-119.

⁵²⁹ Ասատուր Հ., Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 122:

⁵³⁰ Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012, էջ 66:

շարունակել է զարթոնք ապրել ընդհուպ մինչև Հայոց ցեղասպանությունը: 1915-ը թեև ծանր հարված հասցրեց պոլսահայ մշակույթին, սակայն Թուրքիայի Հանրապետության ձևավորման առաջին տարիներին արդեն Պոլսոց հայ համայնքում սկսել են որոշ քայլեր կատարվել մշակույթի վերագարթոնքի ուղղությամբ⁵³¹: «Առաջին աշխարհամարտն յետոյ տիրող պայմաններու բերումով ամէն բան փոխուեցաւ յանկարծ: Մեր Պոլիսը ամայացաւ իր արժէքներէն, հիները մեծ մասամբ կորսուեցան, նորերը չյաջորդեցին անոնց եւ հետեւաբար ստեղծուեցաւ անջրպետ մը մեր կրթական, մշակութային եւ ընկերային կեանքէն ներս: Թուրքիոյ Հանրապետութեան հաստատումով երկրին մէջ կրօնքը բաժնուեցաւ աշխարհիկ կեանքէն եւ հետեւաբար սահմանափակուեցան Պատրիարքարանի իրաւասութիւնները, դժուարութիւններ ունեցանք պահպանելու Սահմանադրական իմաստով կազմակերպեալ համայնք մը ըլլալու մեր իրաւունքը եւ մտաւորական դէմքերու պակասին կամ ստեղծուած նոր պայմաններուն բերումով, պահ մը կասեցաւ մշակութային կամ ընկերային կեանքը, դադարեցաւ նաեւ Հայ թատրոնը: Սօտաւորապէս 25-30 տարիներու պէտք եղաւ մինչեւ որ Հայ կեանքը վերսկսաւ կենդանութեան նշաններ ցոյց տալ ու վերակազմուիլ Պոլսոյ մէջ: Այս շրջանը կը գուգադիպէր Երկրորդ Աշխարհամարտի տարիներուն»⁵³², - այսպէս է նշել Պ. Զոյայանը:

Պոլսահայ համայնքում հրատարակվում են մի քանի պարբերականներ, որոնցից են կրոնական և գրական ուղղությամբ «Հայ խոսք» հանդեսը (1924-1930թթ.) և «Նոր լուր» թերթը, որն ունեցել է քաղաքական և առևտրական բնույթ: Ինչպես նաև սկսել են տպագրվել Բագարատ Թևյանի «Երջանիկին տարեցույցը» (1924-1930թթ.), Ավետիս Ալեքսանյանի «Նոր օր», գրող Ռուբեն Մաշոյանի «Դեպի լույս» (1950թ.), «Ճակատամարտ» (1927-1937), «Պատկեր» (1931-1945թթ.), «Արևելք» (1932-1938թթ.), «Աստղաբերդ» (1951-1953թթ.), «Ճառագայթ» (1947-1952թթ.), «Մարմարա» (1924-1926թթ.) պարբերականները⁵³³:

Պոլսահայ մամուլի մեջ կարևոր դեր է ունեցել նաև թատերագետ Հակոբ Այվազի կողմից հրատարակված «Կուլիս» թատերական երկշաբաթաթերթը, որը կանոնավոր կերպով հրատարակվել է շուրջ 50 տարի (1946-1996թթ.): Ավելորդ չէ նշել, որ թերթը հրատարակվել և գոյատևել է միայն Հակոբ Այվազի դրամական միջոցներով, քանի որ «երբ Քուլիսի բաժանորդագին կը պահանջուէր, միլիոններէ, միլիառներէ ճառող առևտրական մը, յանկարծ իր քսակը կը գոցէր: «Մարդ Աստուծոյ, դուն գործ բան չունի՛ս որ Հայերէն թերթ կը հրատարակես» կ'ըսէր այդ ընչաքաղց առևտրականը: Յակոբ Այվազ ո՛վ գիտէ քանի անգամ ստիպուեցաւ պատասխանել այսպիսի հարցումի մը: Բայց վստահ ենք որ ան դէմ յանդիման մնաց հակառակին հետ ալ: Ո՛վ գիտէ քանիներ ու քանիներ, Այվազին շնորհակալ եղան որ ան իրենց առիթ կուտար Հայերէն ընթերցում ընելու եւ խապրիկներ առնելու Հայ արուեստի աշխարհէն: Առաջիններուն արհամարհանքը որքա՛ն կը նսեմանայ երկրորդներում արտայայտութեան քով»⁵³⁴:

Բացի վերոնշյալ պարբերականներից՝ Պոլսում գործող տարբեր հայկական հաստատություններ ևս ունեցել են և ունեն իրենց պարբերականները, ինչպես օրինակ՝ Սուրբ Փրկիչ հիվանդանոցի համանուն հանդեսը, Պոլսոց Հայոց Պատրիարքարանի պաշտոնական օրգան «Շողակաթը», իսկ 1966թ. սկսել է հրատարակվել Պատրիարքարանի մյուս պաշտոնական հանդեսը՝ «Լրաբերը»: Կենտրոնական վարժարանի շրջանավարտների միությունը 1948-ից սկսել է հրատարակել «Հանդես Մշակույթի» ամսագիրը, որը որոշ ժամանակ անց փակվել է և վերաբացվել 1993-ին

⁵³¹ Մելքոնյան Ռ., Ավագյան Ա., Մտամբուլի հայ համայնքի արդի վիճակը, Եր., 2009, էջ 108:

⁵³² «Մարմարա», Կ. Պոլիս, 21.11.1988:

⁵³³ Özdögan G., Üstel F. Karakaşlı K., Kentel F., Türkiye’de Ermeniler: Cemaat-Birey-Yurttaş, İstanbul, 2009, s. 213.

⁵³⁴ «Մարմարա», Կ. Պոլիս, 04.05.1988:

«Հորինա» անվամբ (այսօր արդեն չի տպագրվում): Վերոնշյալ ամսագրերը համայնքային կյանքում ունեցել են ծանրակշիռ դեր:

Այսօր Ստամբուլի հայ համայնքի հիմնական թերթերը երեքն են՝ «Ժամանակ», «Նոր Մարմարա» օրաթերթը և «Ակօս» երկլեզու (հայերեն-թուրքերեն) շաբաթաթերթը:

«Մարմարա» օրաթերթը հիմնադրվել է Ստամբուլի հայկական համայնքի անվանի ներկայացուցիչ Սուրեն Շամլյանի ջանքերով 1940թ. օգոստոսի 31-ին: Մինչև 1951թ. հուլիսի 25-ը, այսինքն՝ մինչև իր մահը խբագիրն է եղել Ս. Շամլյանը, ներկայումս այն խմբագրում է Ռ. Հատեճյանը (Հադդեկեր): 1967 թվականից թերթը վերանվանվել է «Նոր Մարմարա», որը շարունակելով «Մարմարա» օրաթերթի առաջին շրջանի ուղեգիծը՝ հայ ընթերցողին է ներկայանում գրական, գեղարվեստական, բանասիրական, հասարակական բովանդակությամբ: Թերթը նաև հայ կյանքի պահանջների և մտահոգությունների կրողն է, ինչի շնորհիվ կարողացավ իր նշանակությունը ծանրակշիռ դարձնել հայ մամուլի կյանքում:

«Ժամանակը», որ Հայոց ցեղասպանությունից հետո էլ «հակառակ իր լճացած բովանդակութեան կը շարունակէր մտնել Իսթանպուլահայ ընթերցողներուն մեծամասնութեան տունէն ներս»⁵³⁵, պոլսահայ մամուլի ամենահին օրգաններից է, որ հիմնադրվել է 1908թ. հոկտեմբերի 28-ին Արա Գոչունյանի և իր եղբայր Սարգիս Գոչունյանի ջանքերով⁵³⁶, շարունակվում է տպագրվել մինչ օրս: Հիմնադրման առաջին տարիներին թերթին թղթակցել են Ժամանակի հայ անվանի մտավորականներ Երվանդ Օսյանը, Զապել Եսայանը, Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը: Թերթի տպաքանակը եղել է 15 հազար: 1920 թվականին միավորվել է «Ժողովրդի ձայն» թերթի հետ և որոշ ժամանակ (մինչև 1924թ.) կոչվել է «Ժողովրդի ձայն-Ժամանակ», իսկ 1935թ. մի քանի ամիս կոչվել է «Ժամանակ-Թուրքիա»⁵³⁷: Այսօր թերթի տպաքանակը 1500 օրինակ է և տարածվում է Ստամբուլի հայաբնակ թաղամասերում: Խմբագիրն է Արա Գոչունյանը:

«Ակօս» երկլեզու (պոլսահայ համայնքի մամուլի պատմության մեջ առաջին հայերեն-թուրքերեն) շաբաթաթերթը հիմնադրվել է 1996թ. ապրիլի 5-ին Հրանտ Դինքի կողմից, ով էլ և եղել է թերթի գլխավոր խմբագիրը մինչև իր մահը՝ 2007թ.: Հիրավի մեծ է «Ակօս» շաբաթաթերթի և նրա լուսահոգի խմբագրի դերը պոլսահայ մամուլի զարգացման, ինչպես նաև թուրքական հասարակության մեջ Հայոց ցեղասպանության, հայկական թեմատիկայի քննարկման և այդպիսով նաև մի շարք տարուների ճեղքման գործում:

Ամփոփելով նշենք, որ պոլսահայ մամուլի պատմության հետազոտումն ունի կարևոր գիտական, հասարակական և քաղաքական նշանակություն, քանի որ հնարավորություններ է ընձեռում ուսումնասիրելու Պոլսի հայ համայնքի քաղաքական վիճակը, խնդիրները, մշակույթը և էլ ավելի համակողմանի պատկերացում կազմել փոքրամասնությունների նկատմամբ թուրքական քաղաքականության վերաբերյալ:

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ПЕЧАТИ В КОНСТАНТИНОПОЛЕ: КРАТКИЙ ОЧЕРК

Элина Мирзоян

(резюме)

В статье изложена краткая история армянской печати в Константинополе и представлен вклад константинопольских армян в истории армянской печати. На основе

⁵³⁵ «Մարմարա», Կ. Պոլիս, 21.11.1988:

⁵³⁶ Քապիմ (Միսաք Գոչունեան), Կեանքի տեսարաններ, Իսթանպուլ, 2009, էջ 10:

⁵³⁷ Pamukciyan K., İstanbul'da yayımlanan bazı Ermeni gazete ve dergileri hakkında ansiklopedik bilgiler, İstanbul yazıları: Ermeni kaynaklarından tarihe katkılar- I, İstanbul, 2002, s. 189-191.

фактологического анализа были выделены общие и специфические особенности многолетней деятельности армянской печати Константинополя. Также подчеркивается характерная особенность армянской печати.